ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2020 թվականի N 1607 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ և 53-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2021 թվականի միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2021 թվականի միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ծրագիրը սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1607 - Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Թմրամիջոցների տարածման դեմ պայքարի պատմությունը տևում է արդեն մեկ դարից ավել, իսկ մասնագետներն այն համարում են 21-րդ դարի գլոբալ խնդիրներից մեկը, քանի որ դրանց չարաշահումները լուրջ վտանգ են ներկայացնում ոչ միայն անհատի, այլև ողջ հասարակության և պետության համար: Ավելին, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը սպառնում է պետության անվտանգությանն ու կայունությանը, աղետալի վնասներ է հասցնում երկրի տնտեսությանը, ազգի գենոֆոնդին:

2. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության համաձայն՝ թմրամիջոցների տարածումը և տարանցումն անմիջական սպառնալիք են ներկայացնում երկրի ազգային անվտանգության համար, իսկ Հայաստանի Հանրապետության մասնակցությունը անդրազգային հանցագործությունների, այդ թվում՝ թմրամիջոցների տարածման դեմ միջազգային պայքարին, հանդիսանում է պետության և ժողովրդի անվտանգության ոլորտում ազգային անվտանգության ապահովմանն ուղղված գործողություն:

3. Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ու կայուն զարգացումը, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարում պետական իրավասու մարմինների կարողությունների զարգացումն ու դրանց գործունեության արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում ներպետական և միջազգային համագործակցությունն ամրապնդելու նպատակով Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը համագործակցում է բոլոր շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ:

4. Նշված ոլորտում միջգերատեսչական համագործակցությունն ակտիվացնելու նպատակով անհրաժեշտ է մշակել միջոցառումների տարեկան ծրագիր, որը նպատակաուղղված

կլինի կանխելու, հայտնաբերելու թմրամոլության, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները:

5. Բազմաթիվ երկրներում անվտանգության հիմնական սպառնալիքը մնում են միջազգային ահաբեկչությունը, ծայրահեղականությունը, թրաֆիքինգը, ինչպես նաև կազմակերպված հանցավորության այլ տեսակները, որոնց ֆինանսավորման հիմնական աղբյուրը միջազգային «սև շուկաներում» թմրամիջոցների իրացումից ստացվող եկամուտներն են: Ընդ որում, չնայած Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության շրջափակմամբ պայմանավորված, հարևան երկրների հետ սահմանային հաղորդակցության սահմանափակությանը, այնուամենայնիվ, Հայաստանի աշխարհագրական դիրքը կարող է գրավիչ լինել անդրազգային կազմակերպված հանցավոր խմբերի համար ինչպես թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների՝ հանրապետություն ապօրինի ներկրման, այնպես էլ հանրապետության տարածքն օգտագործելով դրանց տարանցիկ տեղափոխման համար:

6. Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը միջազգային հանրության անվտանգությանն ուղղված լուրջ սպառնալիք է, որի դեմ պայքարը պահանջում է մարդկային և ֆինանսական հսկայական միջոցներ և պետությունների համատեղ ջանքեր և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հակազդումը՝ կապված տարբեր երկրների ակտիվ քաղաքական, տնտեսական, մշակութային ինտեգրացման հետ, մեկ երկրի, առավել ևս մեկ ծառայության շրջանակներում՝ հնարավոր չէ լուծել: Անհրաժեշտ է մշակել և իրականացնել կանխարգելիչ համատեղ ծրագրեր՝ ուղղված թմրամիջոցների պահանջարկի նվազեցմանը, որը կբերի վերջինիս առաջարկի նվազեցմանը:

7. Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը և թմրամոլությունը, որպես տարածական և խիստ հակահասարակական ուղղվածություն ունեցող երևույթներ, համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում են: Այնքանով, որ իրենց ծավալներով և մասշտաբներով ներառել են բոլոր աշխարհամասերը, ժողովուրդներին՝ անկախ վերջիններիս ազգությունից, սեռից, դավանանքից և սոցիալական պատկանելիությունից:

8. Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարն ակտիվացնելու, դրանց հակազդման գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության շահագրգիռ գերատեսչությունների կողմից իրականացվել են մի շարք օպերատիվ-կանխարգելիչ և

կազմակերպչական բնույթի միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են եղել այդ երևույթների կանխարգելմանն ու հայտնաբերմանը:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՔՈՂԱՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ), ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՈՒ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՇԱՐԺԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

9. Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարն ակտիվացնելու, դրանց հակազդման գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով, 2019 թ. ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են եղել այդ երևույթների կանխարգելմանն ու բացահայտմանը:

10. 2019 թ. ընթացքում հանրապետության իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվել են թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործության 1088 դեպք, նախորդ տարվա 877-ի դիմաց: Գրանցվել է աճ 211 դեպքով կամ 24%-ով: Բացահայտման տոկոսը կազմել է 54% (2018 թ.՝ 61%):

11. Հայտաբերված 1088 դեպքերից 508-ը վերաբերել են թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի իրացմանը, այդպիսով 2018 թվականի համեմատ գրանցվել է աճ 81 իրացման դեպքով կամ 18,9 տոկոսով (2018 թ.՝ 427):

12. Նույն ժամանակահատվածում գրանցվել է վարչական իրավախախտումների 299 դեպք (նախորդ տարի՝ 263): Աճը կազմել է 36 դեպք կամ 13,6 տոկոս:

13. Չնայած այն հանգամանքին, որ հաշվետու ժամանակահատվածում թմրանյութերի հետ կապված հանցագործությունների դեմ պայքարի ցուցանիշներն աճել են, այնուամենայնիվ պետք է հաշվի առնել մի շարք հանգամանքներ:

14. 2018-2019 թթ. ընթացքում հայտնաբերված թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ շարունակում է բարձր մնալ այս հանցատեսակի լատենտայնությունը, և հանցավորության ամբողջական պատկերը չի արտացոլվում գրանցված հանցագործությունների քանակական ցուցանիշներում:

15. 2018-2019 թթ. թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների սխեմատիկ պատկերը հետևյալն է.

ՀՀ քր. օր. հոդված	2018 թ.	2019 թ.	դեպք +, -	տոկոս
Ընդամենը	**877**	**1088**	**+211**	**24**
266, որից՝	**427**	**508**	**+81**	**19**
266 հ 1 եւ 2 մասեր	371	419	+48	13
266 հ 3 մաս	48	76	+28	58,3
266 հ 4 մաս	8	13	+5	62,5
267 հ	**2**	**3**	**+1**	**50**
267.1	**114**	**163**	**+49**	**43**
268 հ	**311**	**339**	**+28**	**9**
269 հ	**3**	**1**	**-2**	**66,6**
270 հ	**0**	**0**	-	-
272 հ	**1**	**0**	**-1**	**100**
273 հ	**19**	**74**	**+55**	**289**
274 հ	**0**	**0**	-	-

16. Նշված դեպքերից չբացահայտված են մնացել 270-ը (2018 թ.՝ 211), որից 220-ը՝ ՀՀ քր. օր-ի 266-րդ, 5-ը՝ 268-րդ, իսկ մնացածը՝ այլ հոդվածների հատկանիշներով:

17. 2018-2019 թթ. թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններով պատասխանատվության ենթարկված անձանց սխեմատիկ պատկերը հետևյալն է.

	2018 թ. 12 ամիս		**2019 թ. 12 ամիս**	
	անձինք	տոկոսը	անձինք	տոկոսը
Ընդամենը	**485**	X	**510**	X
Անչափահաս	3	0,61	10	1,9
18-ից 24 տարեկան	50	10,3	45	8,8
25-ից 29 տարեկան	84	17,3	65	12,7
30-ից 49 տարեկան	280	57,7	269	52,7

49 և բարձր	68	14,02	121	23,7
Այդ թվում՝ կին,	19	3,9	30	5,8
Օտարերկրացի	29	5,9	46	9

18. Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ իրավապահ մարմինների կողմից ՀՀ առողջապահության նախարարության «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ փորձաքննության ներկայացված անձանց օրգանիզմներում հայտնաբերված թմրամիջոցները՝ ըստ խմբերի.

	2018 թ. 12 ամիս		**2019 թ. 12 ամիս**	
	անձինք	տոկոսը	անձինք	տոկոսը
Ընդամենը	**1251**	X	571	X
կաննաբիս	967	77,3	394	69
ափիոն	161	12,8	41	7,1
սինթետիկ	121	9,6	132	23,1
կոկաին	2	0,15	4	0,7

Հիշյալ անձանց տարիքային կազմը հետևյալն է՝

	2018 թ. 12 ամիս		**2019 թ. 12 ամիս**	
	անձինք	տոկոսը	անձինք	տոկոսը
Ընդամենը	**1251**	X	**571**	X
Անչափահաս	14	1,1	15	2,6
18-ից 25 տարեկան	184	14,7	97	16,9
26-ից 35 տարեկան	370	29,5	173	30,3
36 և բարձր	683	54,6	286	50,2
Այդ թվում՝ կին	33	2,6	17	2,9
Օտարերկրացի	26	2,07	11	1,9

19. Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տվյալների 01.01.2019 թ. դրությամբ «թմրամոլ» ախտորոշմամբ հաշվառման մեջ են 6951 թմրամոլ, որոնցից 4394-ը՝ կաննաբինոիդային, 2552-ը՝ օփիոդային, 5-ը՝ կոկաին խմբի թմրամոլներ են:

20. Հայաստանի Հանրապետությունում «Մեթադոնային փոխարինող բուժման տրամադրում ափիոնատիպ նյութերից» ծրագրի շրջանակներում 31.21.2019 թ. դրությամբ Երևան քաղաքում հաշվառված են 290 շահառու, Վանաձորում՝ 14-ը, Գյումրիում՝ 10-ը, Կապանում՝ 16-ը, ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում՝ 169:

3. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

21. Սույն ծրագրով սահմանված են բազմապիսի նպատակներ, որոնք հասցեագրված են թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի բոլոր ոլորտներին և ներառում են նախորդ տարեկան ծրագրերով սահմանված ուղղությունները:

22. Սույն ծրագրում ներկայացված գործողություններն ուղղված են Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետ կազմակերպմանը և իրականացվում են՝ պահպանելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով սահմանված սկզբունքները:

23. Ելնելով Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ռազմավարության դրույթներից՝ Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2021 թվականի ծրագրի հիմնական նպատակներ են՝

1) թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցավորության նվազեցման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը.

2) թմրամոլության, թմրամիջոցների հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությանը նպաստող պայմանների և ծնող պատճառների վերացումը.

3) թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության նախականխումն ու բացահայտումը, այդ նպատակով իրավապահ մարմինների և այլ կազմակերպությունների համակարգված գործունեության ապահովումը.

4) նվազեցնել և արդյունքում բացառել անչափահասների և երիտասարդության շրջանում թմրամիջոցների գործածումը:

24. Ծրագրի հիմնական խնդիրներն են՝

1) թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության և դրա հետ կապված հանցագործությունների նախականխման և բացահայտման ուղղությամբ պետական մարմինների համագործակցության արդյունավետության բարձրացում.

2) օրենսդրական դաշտի կատարելագործում և կիրառելիության ապահովում, մասնավորապես՝ թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի համակողմանի վերլուծություն, դրանց կատարելագործում, համապատասխանեցում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին.

3) թմրամոլության առաջնային կանխարգելում, թմրամոլության նվազեցում՝ դրա կանխման և արդյունավետ բուժման իրականացման միջոցով.

4) թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության ծավալի նվազեցում.

5) թմրամիջոցներից կախում ունեցող անձանց բուժման արդյունավետ կազմակերպում, նարկոլոգիական ծառայության արդիականացում և սոցիալական վերականգման համակարգի ներդրում.

6) թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում միջազգային, ինչպես նաև միջգերատեսչական համագործակցության զարգացում և ամրապնդում.

7) թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի օգտագործման վտանգի վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացում.

8) պրեկուրսորների մեծածախ առևտրի նկատմամբ վերահսկողության, ապօրինի առևտրի կամ ընդհատակյա լաբորատորիաների հայտնաբերմանն ուղղված քայլերի ապահովում.

9) թմրամոլության և դրա հասցրած վնասի մասին անչափահասների իրազեկվածության բարձրացում, քանի որ աշխարհի բազում երկրներում որպես ապօրինի թմրամիջոցների և հոգեմետ նյութերի սպառող օգտագործվում են երեխաները, ինչն իրենից ահռելի վտանգ է ներկայացնում:

25. Սույն ծրագրով սահմանված նպատակներից և խնդիրներից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններն ակտիվորեն մասնակցում և իրականացնում են տարբեր միջոցառումներ: Մասնավորապես՝

1) Հայաստանի Հանրապետության տարածք մաքսանենգ ճանապարհով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ներմուծումը կանխելու և հայտնաբերելու նպատակով Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմիններն ակտիվորեն մասնակցում են Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների շրջանակներում մշտապես անցկացվող «Կանալ» հակաթմրանյութային գործողությանը.

2) յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում իրականացվում է նաև «կանեփ-կակաչ» համալիր օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումը, որին ներգրավվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ստորաբաժանումների ծառայողները, տեղական ինքնակառավարման մարմինների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

4. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Թմրամոլության, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով 2021 թվականի ընթացքում նպատակահարմար է իրականացնել մի շարք միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝

1) կատարելագործել Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերը և դրանք համապատասխանեցնել միջազգային պայմանագրերին՝ միաժամանակ ապահովելով դրանց կիրառելիությունը: Այս նպատակով անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի համակարգային շարունակական վերլուծություն, անհրաժեշտության դեպքում դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում՝ ՄԱԿ-ի 1961 թ., 1971 թ. և 1988 թ. կոնվենցիաների և միջազգային փաստաթղթերի դրույթներին համապատասխան.

2) թմրամոլության, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների դեմ պայքարում անցկացնել օպերատիվ-կանխարգելիչ և հատուկ միջոցառումներ: Այս ուղղությամբ անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության պետական սահմանի

անցման կետերում և մաքսային հսկողության գոտիներում ուժեղացնել հսկողությունը թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների մաքսանենգ ճանապարհով փոխադրումների նկատմամբ, ապահովել սահմանային արդյունավետ վերահսկողություն.

3) զարգացնել զինվորականների շրջանում թմրամոլության դեմ պայքարի արդյունավետությունը՝ համագործակցել զինվորականների շրջանում թմրամիջոցի հայտնաբերման յուրաքանչյուր դեպքի համակողմանի և ամբողջական բացահայտման աշխատանքներում.

4) ինտենսիվացնել լրատվամիջոցներով թմրամոլության հասցրած վնասների և հետևանքների վերաբերյալ հաղորդումները, դրանց մասնակից դարձնել համապատասխան մասնագետների՝ բժիշկների, հոգեբանների, մանկավարժների.

5) բարձրացնել բնակչության իրազեկվածությունը թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հասցրած վնասի վերաբերյալ: Այս ուղղությամբ անհրաժեշտ է շարունակել բնակչության իրազեկման և տեղեկացվածության բարձրացման աշխատանքները թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վերաբերյալ՝ հատկապես ռիսկային խմբերում.

6) ուսումնասիրել թմրամիջոցների տարածման դեմ պայքարի առաջավոր միջազգային փորձը, այդ թվում՝ կազմակերպել տվյալ ոլորտում ներգրավված ծառայողների մասնագիտական վերապատրաստում Անկախ պետությունների համագործակցության մասնակից, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ և եվրոպական այլ պետությունների իրավապահ մարմինների ուսումնական հաստատություններում, Հայաստանի Հանրապետությունում միջազգային փորձը ներդնելու նպատակով անցկացնել սեմինարներ, խորհրդակցություններ.

7) իրականացնել թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց բուժման և վերականգնողական միջոցառումներ. այս ուղղությամբ նպատակային կլինի արդիականացնել նարկոլոգիական ծառայությունները, ապահովել բնակչության և թմրամիջոցներ գործածող անձանց շրջանում կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների և նարկոլոգիական բժշկական օգնություն և ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների միջև սերտ համագործակցությունը, ապահովել նարկոլոգիական ծառայությունում հաշվառված անձանց զբաղվածությունը.

8) անչափահասների և երիտասարդության շրջանում իրականացնել առողջ ապրելակերպին նվիրված միջոցառումներ. այս նպատակով անհրաժեշտ կլինի կազմա-

կերպել և անցկացնել սպորտային-առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումներ, թմրամոլության դեմ պայքարի թեմաներով սեմինարներ, էլեկտրոնային և զանգվածային լրատվական միջոցներով իրականացնել քարոզչություն՝ անչափահասների զբաղվածությունն ապահովվելու և նրանց կողմից թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի հավանական գործածումը կանխելու նպատակով:

5. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

27. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրագործման համար պահանջվող ֆինանսական ծախսերը նախատեսվում է իրականացնել հետևյալ աղբյուրներից՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով համապատասխան պետական մարմնին տվյալ տարվա համար հատկացված գումարներ.

2) միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև տեխնիկական և խորհրդատվական գծով դոնոր-պետությունների միջոցներ.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ:

6. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

28. Ծրագրի շրջանակներում իրականացվելիք միջոցառումներն իրենց դրական անդրադարձը կունենան թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխարգելման գործում: Մասնավորապես, ծրագրի իրագործումից ակնկալվող արդյունքներն են՝

1) թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի համար անհրաժեշտ օրենսդրական բազայի կատարելագործումը՝ այն համապատասխանեցնելով Հայաստանի Հանրապետության միջազգային հանձնառություններին,

2) բնակչության շրջանում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հասցրած վնասի վերաբերյալ տեղեկատվության մակարդակի բարձրացումը, դրա դեմ պայքարելու հնարավորությունների մասին իրազեկվածությունը,

3) թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի, այդ թվում՝ սահմանային մաքսակետերով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների՝ մաքսանենգությունների նկատմամբ հսկողության ուժեղացումը,

4) միջազգային համագործակցության ամրապնդումը և կապերի սերտացումը,

5) թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների առաջարկի և պահանջարկի նվազեցումը,

6) նարկոլոգիական հիվանդների բուժման որակի և արդյունավետության բարձրացումը,

7) թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում իրավապահ մարմինների գործունեության և համագործակցության արդյունավետության բարձրացումն ու ամրապնդումը,

8) նյութատեխնիկական բազայի վերազինումը կնպաստի ի հայտ եկած նոր թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների հետազոտման և նույնացման օպերատիվությանը, մասնավորապես՝ ծխախառնուրդներում՝ սփայսերում, սինթետիկ կաննաբինոիդների հայտնաբերմանը, քանի որ առկա տեխնիկան շատ հնամաշ է և հետագա օգտագործման համար գրեթե անպիտան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1607 - Լ որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Ց Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Կատարող մարմինը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6
1. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի կատարելագործումը և դրանց համապատասխանեցումը միջազգային պայմանագրերին					
1.	Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող՝ ՀՀ ներպետական իրավական ակտերի համակարգային վերլուծության իրականացում և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը՝ ՄԱԿ-ի կոնվենցիաների և միջազգային փաստաթղթերի դրույթներին համապատասխան	ՀՀ գործող օրենսդրության կատարելագործում և համապատասխանեցում ՀՀ միջազգային հանձնառություններին	ՀՀ ոստիկանություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե	2021 թվականի ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում:

2.	2020 թ. իրականացված աշխատանքների արդյունքների հիման վրա ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարին վերաբերող դիտակտիկ նյութերի և դրանց կից նկարագրական զեկույցների նախապատրաստում /հայերեն, ռուսերեն, անգլերեն/	Հնարավորություն կտա ներկայացնել հանրապետությունում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ուղղությամբ իրականացված աշխատանքները միջազգային հանդիպումներում	ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե	2021 թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում:
3.	ՄԱԿ-ի Թմրամիջոցների միջազգային վերահսկման գրասենյակի կողմից տրամադրած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ի հայտ եկած նոր թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը	Կնվազեցնի թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը	ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե	2021 թվականի ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում:

2. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում օպերատիվ կանխարգելիչ և հատուկ միջոցառումների անցկացում					
4.	Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջպետական համաձայնագրերի, միջազգային ծրագրերի դրույթների իրականացում	Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարում միջազգային համագործակցության ամրապնդում	ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
5.	5.1 ՀՀ պետական սահմանի անցման կետերում և մաքսային հսկողության գոտիներում հսկողության ապահովման կատարելագործում 5.2 ՀՀ ոստիկանության և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կինոլոգիական կենտրոնների նյութատեխնիկական բազայի ընդլայնում և հզորացում	ՀՀ մաքսային սահմաններով ապօրինի տեղափոխվող թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների հայտնաբերում	ՀՀ պետական եկամուտների կոմիտե ՀՀ ոստիկանություն	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
6.	«Կանալ» տարածաշրջանային օպերատիվ-կանխարգելիչ	Տարածաշրջանային համագործակցության ամրապնդում,	ՀՀ ոստիկանություն	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ

	համալիր միջոցառմանը մասնակցության ապահովում	թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների՝ մաքսանենգ ճանապարհով Հայաստանի Հանրապետություն ներմուծման կանխում	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե		չարգելված միջոցներ
7.	Զինծառայողների շրջանում թմրամոլության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում և այդ գործընթացում իրավապահ մարմինների հետ համագործակցության ապահովում	Զինծառայողների շրջանում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի գործածման կանխարգելում և դրանց գործածման դեպքերի բացահայտում	ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
3. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հասցրած վնասի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացում					
8.	8.1 Հանրային և մասնավոր հեռուստաընկերությունների հետ համատեղ հատուկ հաղորդումների, թեմատիկ ֆիլմերի և սոցիալական տեսահոլովակների պատրաստում և ցուցադրում, ինչպես նաև զետեղում վարկանիշային էլեկտրոնային լրատվամիջոցների կայքերում 8.2 Թմրամոլության կանխարգելման նպատակով քարոզչական աշխատանքների	Թմրամոլության և դրա հասցրած վնասի մասին բնակչության իրազեկվածության բարձրացում	ՀՀ ոստիկանություն ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՋԼՄ-ներ (համաձայնությամբ)	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

	կազմակերպում և անհրաժեշտ տեղեկատվության տարածում				
9.	Ուսումնական հաստատություններում սովորողների, ուսուցիչների և ծնողների շրջանում թմրամիջոցների ապօրինի շրջանառության և թմրամոլության դեմ պայքարի թեմաներով զեկույցների և սեմինարների անցկացում	Ուսումնական հաստատություններում սովորողների շրջանում թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածման կանխարգելում, թմրամոլության և դրա հասցրած վնասի մասին անչափահասների իրազեկվածության բարձրացում	ՀՀ ոստիկանություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ մարզպետարաններ, համայնքապետարաններ (համաձայնությամբ) Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) համաձայնեցնելով ՋԼՄ-ների հետ	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
4. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում ոլորտի ծառայողների մասնագիտական գիտելիքների կատարելագործում, միջազգային համագործակցության զարգացում					
10.	ԱՊՀ մասնակից և ՀԱՊԿ անդամ պետությունների իրավապահ մարմինների ուսումնական հաստատություններում հանրապետության իրավապահ մարմինների իրավասու ստորաբաժանումների ծառայողների վերապատրաստման կամ գիտելիքների կատարելագործման այլ ծրագրերին ներգրավում	Համապատասխան աշխատակիցների մասնագիտական գիտելիքների կատարելագործում, փորձի փոխանակում	ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ պաշտպանության նախարարություն	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

			ՀՀ պետական եկամուտների կոմիտե		
11.	«2019-2023թթ համար հանցավորության դեմ պայքարում համատեղ միջոցների միջպետական ծրագրի իրագործման ուղղությամբ ԱՊՀ մասնակից-պետությունների ղեկավարների խորհրդի» որոշմամբ հաստատված կետերի շարունակական իրականացում	Համատեղ օպերատիվ-կանխարգելիչ միջոցառումների անցկացման արդյունքում թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի իրացման հետ կապված հանցագործությունների նախականխում և հայտնաբերում:	ՀՀ ոստիկանություն	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
12.	12.1 Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում ՀՀ-ում միջազգային փորձի ներդրման նպատակով խորհրդակցությունների, սեմինարների մասնակցության ապահովում 12.2 Փորձագիտական և աշխատանքային խմբերում ակտիվ մասնակցություն	Օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների հետ համագործակցության ամրապնդում, ծառայողների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների բարձրացում, առաջավոր գիտական փորձի փոխառում ու ներդրում	ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ պաշտպանության նախարարություն	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
13.	ՀՀ ոստիկանության, ՀՀ արդարադատության նախարարության	Իրավասու ստորաբաժանումների	ՀՀ ոստիկանություն	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ

	քրեակատարողական հիմնարկների, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավասու ստորաբաժանումների նյութատեխնիկական վերազինման ապահովում	առկա տեխնիկական միջոցների բարելավում	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե		չարգելված միջոցներ
14.	ՀՀ տարածքում գործող քիմիական ոլորտի կազմակերպությունների և այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից իրենց արտադրական կարիքների համար օգտագործվող և շրջանառության մեջ գտնվող ՄԱԿ-ի 1988թ. Կոնվենցիայի ցուցակներով հսկվող նյութերի շարժի նկատմամբ հսկողության ապահովում:	Պրեկուրսորների մեծածախ առևտրի նկատմամբ վերահսկողության, ապօրինի առևտրի կամ ընդհատակյա լաբորատորիաների հայտնաբերմանն ուղղված քայլերի ապահովում:	ՀՀ ոստիկանություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
5. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց վերականգնողական միջոցառումներ					
15.	15.1 Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածումը դադարեցրած անձանց վերականգնողական աշխատանքների իրականացնող ծառայությունների կարիքների ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում 15.2 Նարկոլոգիական ծառայությունում հաշվառված անձանց, որոնք գտնվում են	Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածումը դադարեցրած, ռեմիսիայի շրջանում գտնվող, բուժման կուրսն ավարտած անձանց ինտեգրումը հասարակություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ մարզպետարաններ, համայնքապետարաններ (համաձայնությամբ)	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

	դադարի /ռեմիսիայի/ շրջանում կամ հաջողությամբ ավարտել են բուժման կուրսը, պետական զբաղվածության կարգավորման ծրագրերում ընդգրկելը		Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)		
16.	Բնակչության և թմրամիջոցներ գործածող անձանց շրջանում կանխարգելման ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների և նարկոլոգիական բժշկական օգնություն և ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների, մարզային, համայնքային սոցիալական ծառայությունների միջև սերտ համագործակցության ապահովում	Կանխարգելման ծրագրերի արդյունավետության բարձրացում, նարկոլոգիական բժշկական օգնության և ծառայության առավել մատչելիության ապահովում, սոցիալական դեպքի վարման շրջանակներում ռիսկային գործոնների բացահայտում և համապատասխան կառույցների հետ համատեղ կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ մարզպետարաններ, համայնքապետարաններ (համաձայնությամբ) Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2021 թվականի ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում:
17.	Սոցիալական ծառայությունների շրջանակում՝ թմրամոլության հակում ունեցող անձանց սոցիալական կարիքների ամբողջական գնահատում և դրանց համարժեք սոցիալական ծառայությունների փաթեթի տրամադրում	Սոցիալական ծրագրերում թմրամոլության հակում ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական անանհրաժեշտ օգնության ցուցաբերում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ մարզպետարաններ, համայնքապետարաններ (համաձայնությամբ) Երևանիքաղաքապետարան (համաձայնությամբ)	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ

6. Անչափահասների և երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի միջոցառումներ					
18.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում «Առողջ ապրելակերպի» դասավանդման ընթացքում թմրամոլության կանխարգելման վերաբերյալ թեմաների ուսուցում	Անչափահասների և երիտասարդների շրջանում թմրամիջոցների գործածման նկատմամբ սոցիալական անձեռնմխելիության խթանում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ մարզպետարաններ, համայնքապետարաններ (համաձայնությամբ)	2021 թվականի ընթացքում	Ֆինանսավորում չի պահանջվում
19.	19.1 Ֆիզիկական պատրաստականության,առողջա-բարական և զանգվածային մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման ապահովում 19.2 Ֆիզիկական պատրաստականության,առողջա-բարական և մարզական զանգվածային քարոզչություն՝ տպագիր, էլեկտրոնային և զանգվածային լրատվական միջոցներով	Բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, առողջ կենսակերպի արմատավորում, հանրությանը իրազեկում, բնակչության լայն խավերին սպորտի պարապմունքներում ներգրավում, բնակչության բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, առողջության ամրապնդում, ֆիզիկական պատրաստականության և սպորտի դերի բարձրացում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Երևանի քաղաքապետարան, ՀՀ մարզպետարաններ, համայնքապետարաններ, մարզական հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ չարգելված միջոցներ
20.	Ըստ բնակության վայրերի պարզ տիպի խաղահրապարակների ստեղծում	Համայնքների բակերում և հանգստի գոտիներում (զբոսայգիներ, պուրակներ) խաղահրապարակների	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2021 թվականի ընթացքում	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենսդրությամբ

		ստեղծում՝ հագեցած պարզ տիպի մարզասարքերով (պտտաձողեր, ճոճանակներ, զուգափայտեր, սահելու, մագլցման և ձգումների համակցված հարմարանքներ ու սարքեր և այլն)	(Երևանի քաղաքապետարան, ՀՀ մարզպետարաններ, համայնքապետարաններ)		չարգելված միջոցներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ